ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1832—1914)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Արևմտահայ մամուլի սկզբնավորումը կապվում է Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ համայնքներում ազգային ինքնագիտակցության, մշակույթի և հասարակական մտքի զարգացման հետ։ Նրա հայտնության գործում նախապատրաստական կարևոր նշանակություն ունեցան հայ գաղթօջախներում արդեն ձևավորված ազգային պարբերական հրատարակությունների ավանդույթները, որոնք ամենից առաջ սկիզբ էին առնում հայերեն առաջին ամսագրից՝ Հ. Շմավոնյանի խմբագրությամբ Մադրասում հրատարակված «Ազդարարից» (1794—1796)։ Արևմտահայ առաջին պարբերականներում «Ազդարարից» ժառանգված այդպիսի ավանդույթներից էին ազգային ինքնության պահպանության, համախմբման ու միասնության, հայ եկեղեցու և նոր ժամանակներում ստեղծվող հոգևոր ու մշակութային արժեքների ներդաշնակության ու զարգացման, հայրենի բնաշխարհում ազգովին ամփոփվելու գաղափարները։ «Ազդարարից» էր սկիզբ առնում նաև արևմտահայ մամուլի արշալույսին իսկ նրա էջերում դրսևորված սևեռուն ուշադրությունը Ռուսաստանի, հայ ժողովրդի հետագա կյանքում այդ երկրի ու նրա ժողովրդի ունեցածիք կարևոր նշանակության նկատմամբ, որ ի վերջո պետք է հասցներ որոշակիորեն ձևավորված ռուսական կողմնորոշման՝ արդեն 1840-ական թթ. («Արշալույս արարատյան», «Հայրենասեր»)։ Եվ վերջապես, նորահայտ արևմտահայ հրատարակությունների բնութագրական դիծը՝ ազգային արժեքների հետ այլ ժողովուրդներին ծանոթացնելու, տյուս առհասարակ քաղաքակրթության նվաճումներին հայությանը հաղորդակցելու լուսավորական ձգտումները դարձյալ սկիզբ էին առնում հայերեն առաջին պարբերականի հաստատած ուղեգծից։ Կանգնած լինելով հին և նոր ժամանակների սահմանագծին, «Ազդարարը» հենվում էր անցյալի վրա այնչափով, որչափով անհրաժեշտ էր հաստատուն քայլեր անել ազգի առջև հայտնված անծանոթ ու դժվարին ուղիներով անցնելու համար։ Հայ մամուլում դրսևորված հասարակական միտքն ու լուսավորական գաղափարախոսությունը անհերքելիորեն վկայում էին, որ այդ անցումն ու ընթացքը արդեն կայացել է։

Արևմտահայ մամուլի սկզբնավորման համար մի որոշ չափով հող նախապատրաստեցին նաև Մխիթարյանների գործունեությունն ու փորձը։ Վերջիններիս վենետիկյան պարբերականները («Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդեան», «Դիտակ Բյուզանդեան») դեռևս XIX դարի առաջին տասնամյակներին տարածվում էին հայ գաղթավայրերում, մասնավորապես Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում՝ թողնելով իրենց անպայման քաղաքակրթիչ ազդեցությունը։ Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայկական պարբերականների սկզբնավորման և զարգացման հարցը քննարկելիս չպետք է աչքաթող անել նաև Օսմանյան կայսրությունում 1839 թ. սկսված թանզիմաթի չափավոր բարենորոգումները, որոնք այս կամ այն կերպ խթանեցին կայսրության հպատակ ժողովուրդների մշակութային զարգացման միտումները։

Արևմտահայ մամուլի զարգացման առաջին շրջանը ընկնում է 1830—1850-ական թթ., երբ թուրքական ու եվրոպական հրատարակությունների կողքին ինքնուրույնաբար սկզբնավորվում են ազգային լրագրությունն ու հրապարակախոսությունը, մշակվում է արևմտահայ լրատվական համակարգը,

որի ամենակարևոր առանձնահատկությունը ազգային նպատակաուղղվածությունն էր։ Այս առանձնահատկությունը արդեն բավական նկատելի է Թուրքիայում լույս տեսած հայերեն անդրանիկ պարբերականի՝ «Լրո գրի» (1832—1850) էջերում, որը թուրքական պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վեքայիի» հայերեն տարբերակն էր։ Սակայն, ի տարբերություն թուրքական պաշտոնաթերթի, «Լրո գիրը» տպագրել է արևմտահայ կրթական ու հասարակական կյանքին վերաբերող լուրեր, նույն բնույթի նյութերի արտատպություններ այլ հրատարակություններից և այլն։

«Լրո գրին» հետևեց Թուրքիայում հրատարակված երկրորդ պարբերականը՝ ամերիկյան բողոքականների «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրը (Զմյուռնիա, 1839—1854), որ հետամտում էր դավանական նպատակներ։ Կտրված լինելով ազգային իրականությունից, այս պարբերականը, սակայն, որոշակի արժեք է ներկայացնում արևմտահայ աշխարհաբարի մշակագործման և ապա իր ժամանակի համար բավական բարձր՝ լրագրական կուլտուրայի տեսակետից։ Եվ այս կտրվածքով (ազգային բովանդակության առումով) առաջին պարբերականներ կարելի է համարել «Արշալույս արարատյանը» (Զմյուռնիա, 1840—1884) և «Ազգարար բյուզանդյանը» (Կ. Պոլիս, 1840—1841), ինչպես և «Հայրենասեր» (Զմյուռնիա, 1843—1846) թերթը։ Ի դեպ, Զմյուռնիայում հրատարակված «Արշալույս արարատյանը» և «Հայրենասերը» առաջինն էին արևմտահայ լրագրության մեջ, որոնք առաջ քաշեցին արևմտահայ և արևելահայ (ինչպես նաև գաղթավայրերի) հոգևոր միասնության խնդիրը, առանձնացնելով Ռուսաստանի դրական նշանակությունը հայության քաղաքակրթության գործում։ Չնայած իր քարոզչության, մասնավորապես միջազգային քաղաքականության ընկալման հարցում «Արշալույս արարատյանը» ի հայտ է բերել մի որոշ էկլեկտիզմ[1], այսուհանդերձ, զգալի երախտիք ունի հայ զույգ հատվածների մտավորականության մերձեցման ասպարեզում։ Հակառակ «Արշալույս արարատյանի» հետ ունեցած գաղափարական տարաձայնությունների, այդ թերթի արժանիքները ժամանակին բարձր էր գնահատում Մ. Նալբանդյանը[2]։

1840-ական թթ. լրագրության, ուրեմն և լրատվության դերն ըստ արժանվույն գնահատելով՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ձեռնամուխ է լինում իր պաշտոնաթերթի՝ «Հայաստանի» (Կ. Պոլիս, 1846—1852) հրատարակությանը։ Պաշտոնաթերթի՝ ի սկզբանե ուրվագծվող սահմաններում իսկ «Հայաստանը» ստեղծագործել է Կ. Պոլսի հայ հանրության ներքին տեղաշարժերը, նրա պահպանողական և նոր, լուսավորական մտածողության ու կողմնորոշումների տեր մտավորականության միջև եղած հակասությունները։ «Հայաստանը» խմբագրել են նաև Հ. Զամուռճյանը (Տերոյենց)՝ պոլսահայ պահպանողական և ուռուցն կրոնական հայացքներ դավանող այդ գործիչը և այնուհետև Մ. Աղաթոնը՝ Թուրքիայի և արևմտահայ համայնքի արևմտականացման համոզված կողմնակիցներից մեկը։ Մ. Աղաթոնի խմբագրության ժամանակ «Հայաստանը» առաջադիմական դիրքերից առաջադրել և պաշտպանել է ազգային նորովի կրթության, երկրագործության, արհեստագործության ու առևտրի տրոհական զարգացման խնդիրներ[3]։ «Արշալույս արարատյանի» հետ միասին «Հայաստանը» լայն տեղեկատվություն է տվել ոչ միայն Օսմանյան Թուրքիայի այլև եվրոպական տերությունների քաղաքական ու հասարակական անցուդարձերի, մշակույթի ու գիտության զարգացման վերաբերյալ։ Արևմտահայ մամուլի լրատվության սահմանների այսպիսի ընդար-

---

1 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից. Երևան, 1982, էջ 154։

2 Ս. Հ. Մխիթարյան. Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը. Երևան, 1994, էջ 332։

3 Վ. Գ. Ղուկասյան. Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը. Երևան, 1975, էջ 208—254։

ձակումը վկայում էր նրա ընթերցողի հետաքրքրության նոր միտումների մասին, այն փաստի մեջ, որ ձևավորվում է լրատվության ազգային բովանդակությունը և նրանում, որ արևմտահայ մամուլը կայացել է։

1840—1850-ական թթ. ի հայտ են գալիս արևմտահայ առաջին տաղանդավոր հրապարակախոսներն ու լրագրողները, որպիսիք էին Գրիգոր Գրիգորյանը («Լրո դիր»), Խաչատուր Օսկանյանը («Ազգարար բյուզանդյան»), Ղուկաս Պալդադարյանը («Արշալույս արարատյան»), Մ. Աղաթոնը, Ն. Զորայանը («Հայաստան») և ուրիշներ, որոնք հայ մամուլ էին ներմուծում ժամանակակից լրագրական մշակույթը, իրենց անհատականության կնիքը դնում ազգային լրագրության ժանրային առանձնահատկությունների վրա։

1850-ական թթ. աննախընթաց լայն իրազեկությամբ, հասարակական կյանքի, մշակույթի, աշխարհաբարի, դպրոցի ու մանկավարժության, նոր գրականության վերաբերյալ իր հրատապ ու հարուստ հրապարակումներով առանձնանում է «Մասիս» թերթը (Կ. Պոլիս, 1852—1908)՝ արևմտահայ ամենաերկարակյաց պարբերականը։ «Մասիսը» կատարել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթի դերը (հաջորդել է «Հայաստանին»)՝ թեև իր լրատվությամբ ու հիմնախնդիրների ըմբռնումով գրեթե միշտ էլ գերաճել է դուստ պաշտոնաթերթի շրջանակներից և արտացոլել արևմտահայ ազատամարտության գաղափարներն ու կողմնորոշումները։ «Մասիսը» իր լուրջ և հասարակականորեն ազդեցիկ խոսքն է ասել ազգային կյանքի համար այնպիսի կարևոր խնդիրներում, ինչպիսիք են ազգային սահմանադրության, հայ իրականության մեջ եկեղեցու և հոգևորականության դերի, Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, Հայկական հարցի, հայ գրականության զարգացման ուղիների, արևելահայ հատվածի ու հայ գաղթօջախների հետ մտավոր և մշակութային ներթափանցման և այլ հարցերում։ Երկար ժամանակ այս թերթը խմբագրել է նրա հիմնադիր Կ. Ություճյանը (սկզբից մինչև 1884 թ.), որից հետո, տարբեր ժամանակներում՝ Ա. Արփիարյանը, Գր. Զոհրապը, Հ. Ասատուրը, Սիպիլը, Մ. Շամտանճյանը, Տ. Արփիարյանը։

1850-ական թթ., կապված արևմտահայ գրականության զարգացման միտումների հետ, հրատարակվել են առաջին գրական պարբերականները՝ «Բանաստեղծը» (1851—1852, 1859) և «Արփի արարատյան» (1853—1856), առաջինը Կ. Պոլսում, մյուսը՝ Զմյուռնիայում։ Դրանք տպագրել են և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական ստեղծագործություններ։

1850-ական թթ. արևմտահայ մամուլում առաջին անգամ դրսևորվեցին սուլթանական բռնապետության դեմ բողոքի, թուրքական ու քրդական բռնազատիչներին ընդդիմանալու և պաշտպանվելու դաղափարները։ Արևմտահայ ընթերցողի մեջ այս տրամադրություններն էր արծարծում Մ. Խրիմյանի խմբագրությամբ Վանում և ապա Կ. Պոլսում լույս տեսած «Արծվի Վասպուրական» (1855—1874, ընդհատումներով) շաբաթաթերթը։ Շատ ուշագրավ է, որ այս շաբաթաթերթը սկզբից իսկ քննադատական դիրք բռնեց պոլսահայերին Բ. Դռան կողմից տրված՝ այսպես կոչված «ազգային սահմանադրության» նկատմամբ, իր զուսպ և իրատես կողմնորոշմամբ դգաստության մղելով այդ կանոնադրության արժեքը չափազանցնող պոլսահայ խանդավառ գործիչներին։ Ժամանակի արևմտահայ շատ պարբերականներից «Արծվի Վասպուրականը» շահեկանորեն տարբերվում էր նաև արևմտահայ գավառի իրական դրության լուսաբանման, ժողովրդի հարստահարյալ կացության բացահայտման անկեղծ ձգտումով։

1850-ական թթ. ժանրային ինքնահաստատման ուղին բռնեցին արևմտահայ երգիծական հրատարակությունները։ Ակներևաբար, Կ. Պոլսի «Զվարճասիրաց» ընկերությունը ընդառաջում էր ժողովրդի տրամադրություններին ու պահանջմունքներին, երբ ձեռնարկում էր «Զվարճախոս» երգիծական շաբաթաթերթի (1855—1856) հրատարակությունը։ Իր մեկամյա գոյության ընթացքում «Զվարճախոսը» խոր հետք չթողեց երգիծական մամուլի, մանավանդ նրա ժանրերի մշակման գործում, սակայն կարևոր դեր կատարեց արևմտահայ

մրտահայերի երգիծանքի և հումորի զգացումները իբրև մշակույթ ներկայացնելու իր առաջին փորձով։ Այդպիսի փորձը վերածվեց արվեստի իսկական դրսևորման՝ Հ. Սրվանձյանի «Մեղվի» (1856—1874) հրապարակ իջնելով։ Իրականության երգիծական ընկալման, ժողովրդական երգիծանքի ավանդույթների զարգացման իմաստով «Մեղուն» շուրջ մեկ և կես տասնամյակ մնաց արևմտահայ երգիծանքի առաջապահիկը՝ անկրկնելի մնալով իրականության երգիծական պատկերման ու երգիծական-լրագրական ժանրերի զարգացման ասպարեզում։

1850-ական թթ. խորանում են արևմտահայության մտավոր ու մշակութային շփումները Արևմտյան Եվրոպայի հետ, որը մի հայտնի չափով արևմուտքի հետ Օսմանյան Թուրքիայի տնտեսական ու քաղաքական մերձեցման, և հետևաբար, արևմտահայ բուրժուաառևտրական խավերի արտաքին տնտեսական կապերի արդյունքն էր։ Այս գործում իրենց կարևոր նշանակությունն ունեցան Եվրոպայում գործող հայկական մտավոր ու կրոնական հաստատությունները, առանձին գործիչներ։ Նկատի ունենք Ֆրանսիայում և Անգլիայում իրենց բնույթով ու նպատակաուղղվածությամբ զուտ արևմտահայ կյանքի հետ կապված մամուլի հանդես գալը։ Դրա նախօրինակը արդեն տվել էին Մխիթարյանները, որոնք դեռևս դարասկզբին Վենետիկում նախաձեռնած իրենց հրատարակություններով հիմնականում կողմնորոշվում էին դեպի արևմտահայ ընթերցողը[4]։ 1855 թ. Փարիզում սկսում են հրատարակվել Ստ. Ոսկանյանի «Արևելքը» (դադարել է 1856 թ.) և Գ. Այվազովսկու «Մասյաց աղավնին» (մինչև 1859 թ.)։ Իրենց ըմբռնումներով դրանք միանգամայն տարբեր, նույնիսկ հակոտնյա հրատարակություններ էին, սակայն յուրաքանչյուրն իր չափով և սահմաններում լրացնում էր հայ հասարակական միտքը և նրա առանձնահատուկ կողմերը։ Ազգային կյանքի հիմնահարցերի, եկեղեցու, օսմանյան հասարակության ու արտաքին քաղաքական կողմնորոշման, լուսավորության և առհասարակ ազգի զարգացման ուղիների հարցերում ունենալով բևեռայնորեն տարբեր պատկերացումներ, այս պարբերականներն ունեին նաև շատ կարևոր մի ընդհանրություն՝ նպաստում էին արևմտահայ մտավոր ու հոգևոր կապերի ամրապնդմանը եվրոպական, և առաջին հերթին ֆրանսիական մշակույթի հետ։ Դրանից հետո Փարիզում Ստ. Ոսկանյանը խմբագրում էր «Արևմուտք» հանդեսը (1859, 1864—1865), Ա. Մուրատյանը՝ «Փարիզ» շաբաթաթերթը (1860—1863), Մանչեստրում Կ. Շահնազարյանը՝ «Երկրագունտ» թերթը (1863—1864)։ Մինչև դարավերջ և այնուհետև Փարիզում տպագրվեցին «Ծաղկոցաձոր», «Համայնք», «Անահիտ», «Բանասեր» և այլ պարբերականներ, Լոնդոնում՝ «Հայաստանը», «Մարտը», «Նոր կյանքը», Ստոկհոլմում՝ «Քննասերը», Վառնայում՝ «Հույսը» և «Իրավունքը», ԱՄՆ-ում՝ «Արեգակը», «Եփրատը» և բազմաթիվ այլ պարբերականներ։ Եվ վերջապես, Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի քաղաքներում պետք է սկզբնավորվեր հայ ազգային կուսակցական մամուլը։

Արևմտահայ մամուլի զարգացման հաջորդ փուլը կապվում է հասարակական հոսանքների ձևավորման ու քարոզչության խորացման հետ (1860—1870-ական թթ.)։ Արևմտահայ հանրության մեջ մեծ ազդեցություն են ձեռք բերում ժողովրդավարական հրատարակությունները՝ «Մեղուն» (Կ. Պոլիս, 1856—1874, ընդհատումներով), «Մասիսը», «Մուսատիի էրճիասը» (1859—1862), «Ծաղիկը» (1861—1867, Զմյուռնիա), «Արարատը» (հայատառ թուրքերեն, Կ. Պոլիս, 1869—1876) և այլն։ Այս պարբերականների էջերում արտահայտվել են ազգային ինքնության, արևմտահայության ներքին՝ վարչական կյանքի ժողովրդավարացման, մշակույթի ժողովրդականացման նոր, առաջավոր պատկերացումներ, որոնք իրենց դրական ազդեցությունը պետք է ունենային նշված բոլոր բնագավառների վրա։ Նշված թերթերն ու հանդես-

---

4 Ա. Ռ. Կարինյան. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության. հ. 2, Երևան, 1960, էջ 127, 156։

ները սկզբունքային բանավեճ էին վարում ամիրայության և սրան փոխարինելու եկած ազգային վերնախավի շահերն արտահայտող հրատարակությունների հետ («Երևակ», «Արևելյան դար», «Ժամանակ», «Օրագիր», «Փունջ» և այլն)։ Ընդ որում, 1860-ական թթ. մամուլում տիրապետող զուտ ազգային կյանքի ներսում ընթացող տեղաշարժերի քննարկումն էր (վարչական, կրթական-լուսավորական, մշակութային)։ 1860-ականի վերջին և 1870-ականի սկզբին այդ մամուլը ստանում է տնտեսական ու ազգային նոր բովանդակություն, որ անմիջականորեն կապվում էր օսմանյան լծի հետագա ծանրացման և քրդական հարստահարողների կողմից արևմտահայության կեղեքումների սաստկացման, նրա իրավազրկության խորացման հետ։ Դրա հետևանքով 1870-ական թթ. արևմտահայ մամուլի առանցքային խնդիրներն են դառնում օսմանյան իրականության մեջ ժողովրդի ազգային ու տնտեսական իրավազրկության իրողությունները։ Այս թեմայի համակողմանի արծարծումը իրականում էր արևմտահայության ազատագրական ձգտումները և ի վերջո նպաստում դրանից հետո ի հայտ եկած Հայկական հարցի՝ որպես ազգային դաղափարախոսության, մշակմանն ու ժողովրդականացմանը։ 1870-ական թթ. առաջադիմական մամուլը (Հ. Պարոնյանի «Մեղուն», «Թատրոնը», «Լույսը», Կ. Փանոսյանի «Մանգումեի էֆքյարը», Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը», Մ. Փորթուգալյանի «Ասիան» և այլ պարբերականներ) սոցիալ-տնտեսական բարեփոխումների, Թուրքիայում բարենորոգչական շարժման վերաբերյալ առաջադիմական հարցադրումներից հասավ ազատագրական գաղափարների պաշտպանությանը և ի վերջո Հայկական հարցի միջազգայնացման պայմաններում իր նպաստը բերեց հայ քաղաքական կուսակցությունների ձևավորմանը։

1870-ական թթ. մամուլը սոցիալականից զատ ստանում է նաև քաղաքական իմաստավորում նաև այն տեսակետից, որ ակտիվորեն քննարկում է Թուրքիայի քաղաքական իրականությունը՝ դրա բարեփոխումների կամ արևմտականացման հետ առնչելով արևմտահայության կացության հնարավոր փոփոխությունները։ Պարբերականներում մերկացվում են ժողովրդի հարստահարման հանդեպ անտարբեր կամ դրանք խրախուսող թուրքական իշխանությունները, նրանց անդործունակությունը, արևելյան անշարժությունն ու րթամտությունը։ Այս բնագավառում առանձնապես սուր և հետևողական էր Կ. Փանոսյանի հայատառ թուրքերեն «Մանղումեի էֆքյարը», որն իր քննադատական նպատակուղղվածության համար քանիցս դադարեցվել է թուրքական իշխանությունների կողմից։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կ. Փանոսյանի թերթը մերկացրել է թուրքական զորքերի վայրագությունները պատերազմի թատերաբեմ դարձած Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև խստորեն քննադատել թրքամետ հայ լրագրողների հակառուսական արամադրությունները։ Այս տեսակետից հայտնի են մանավանդ Կ. Պոլսի էֆենդիական դասի հայածանքները Փանոսյանի դեմ[5]։

1870-ական թթ. արևմտահայ մամուլը սեփական ժողովրդի վիճակը բարելավելու ակնկալությամբ դրականորեն էր վերաբերվում օսմանյան պետության և քաղաքական կյանքի աղատականացմանը։ Այս իմաստով ուշագրավ է այդ վերաբերմունքը «նոր օսմաններին» և օսմանյան առաջին սահմանադրության, 1877—1878 թթ. թուրքական խորհրդարանի գործունեության հանդեպ։ Միաժամանակ, մամուլը իր զարգացման այս շրջանում իր քաղաքական ընդդիմությունն էր հայտնում օսմանիզմի և պանօսմանիզմի, «նոր օսմաններին» գաղափարախոսության մեջ փարթամորեն ճյուղարձակող շովինիստական այն ուղղծին, որ հետամտում էր թուրքական զանգվածի մեջ հպատակ ազգություններին ձուլելու ծայրահեղորեն հետադիմական նպատակը։

---

5 «Մանղումեի էֆքյար», 30 հուլիսի, 4 օգոստոսի 1876։

1870-ական թթ. երկրորդ կեսին և մասնավորապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում մամուլում աստիճանաբար խորանում է արևմտահայության հանդեպ թուրքական ու քրդական հարբստահարիչների գործելակերպի բացահայտումը և դրա հետ կապված՝ Արևմտյան Հայաստանի վարչական ինքնավարություն հետամտող բարենորոգումների մտայնությունը։ Հրապարակախոսության առաջատար թեման է դառնում Արևմտյան Հայաստանի՝ մասնակի բարենորոգումների հարցը։ Այս մտայնությունը հայ մամուլում առավել ուժեղացավ Սան-Ստեֆանոյի դաշնագրից հետո մինչև Բեռլինի կոնգրեսին անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում։ Օսմանյան պետությունը դրան հակադրեց առհասարակ Թուրքիայում բարենորոգումների գաղափարը, որի նպատակն էր հարցի համապետական, լայնածավալ ընդգրկումների մեջ արմատախիլ անել արևմտահայերի ինքնավարական ձգտումները և Հայկական հարցն ընդհանրապես։ 1870-ական թթ. վերջին ծավալված օսմանյան գրաքննության պատժիչ միջոցառումները արևմտահայ մամուլի դեմ ամենից առաջ բխում էին ազգային բողոքի ու ինքնորոշման տրամադրությունները ոչնչացնելու նպատակից։ 1880-ական թթ. սկզբներին արդեն պատերազմում կրած պարտությունից ուշաբերվող թուրքական գրաքննությունը վերածվում է բազմածալ ուժային կառույցի, որը կռվի է նետվում հայ մամուլում դրսևորվող ամեն մի ազատախոսության դեմ։ Ձևականորեն գործում էր 1864 թ. դեկտեմբերին ընդունված մամուլի օրենքը, սակայն իրականում պարբերականների վերահսկողությունը ամենուրեք ստացել էր վարչական բնույթ։ Մեկը մյուսի հետևից կամ միաժամանակ այս շրջանում խափանվում են «Մասիսը», «Մանրումեի էֆքյարը», «Նորագիրը», «Թերճեմանը էֆքյարը», «Մեճմուայը հավատիսը», «Մամուլը» և այլ պարբերականներ։ Խմբագիրները բանտի կամ աքսորի սպառնալիքով հարկադրված էին լռությամբ շրջանցել Հայկական հարցն ու բարենորոգումները հիշեցնող ամեն մի հարցադրում։ 1880 թ. սկսվում է համիդյան «զուլումը», երբ աննախընթաց չափերով սաստկացավ հպատակ ազգերի ճնշումը և փաստորեն նախապատրաստվեց արևմտահայության ցեղասպանությունը։ Բռնություններին հավասարապես ենթարկվում էր նաև հայատառ թուրքերեն մամուլը, որը, ի դեպ, առ այսօր քիչ է ուսումնասիրված։ Մինչդեռ, այդ մամուլը նշանակալիորեն նպաստել է հայ հասարակական մտքի զարգացմանը և ազգային համախմբման գաղափարախոսության տարածմանը։ Հայատառ թուրքերեն մամուլի հանդես գալը պայմանավորված էր Օսմանյան Թուրքիայում թուրքախոս հայ հատվածների առկայությամբ։ Ազգային լեզվի մոռացության պատճառ էին դարձել մի կողմից դավանանքի հարկադրված փոփոխությունը (թուրքախոս հայ կաթոլիկներ) և մյուս կողմից՝ օսմանյան ավանդական միջավայրի լեզվական ճնշումները։ Թուրքախոս այդ շերտերին հայ իրականության մեջ ներգրավելու, կրոնականից անկախ՝ ազգային ընդհանրությունը արժեքավորելու նպատակի ծնունդն էլ եղավ հայատառ թուրքերեն մամուլը։ Այդպիսի առաջին հրատարակություններից էր «Ազգարար Բյուզանդյանը» (1840—1843), որը նախապես մի քանի համար հրատարակվել է հայերեն և ապա անցել հայատառ թուրքերենի։ Իր հեղինակությամբ առանձնանում էր «Մեճմուայը հավատիս» («Լուրերի ամսագիր», Կ. Պոլիս, 1852—1883) պարբերականը։ 1850—1860-ական թթ. այն խմբագրում էր Հ. Վարդանյանը կամ Հովսեփ Վարդան փաշան, որը հայ գրականության մեջ հայտնի է իր «Ագապի հիքեասի» («Ագապիի պատմությունը») վեպով։ Այս պարբերականը պաշտպանել է կաթոլիկական դավանանքը, այդ առթիվ բանավիճել հայերեն պարբերականների հետ, սակայն երբեք դավանական հակամարտության տեղիք չի ավել։ «Մեճմուայը հավատիսը» առաջիններից մեկն էր, որ բողոքի ձայն բարձրացրեց արևմտահայության հանդեպ սուլթանի գործադրած բռնությունների դեմ։ Թերթի այդ ավանդույթը շարունակող նրա վերջին խմբագիրը Հ. Թոլայանը բանտ նետվեց 1883 թ. և պարբերականը առմիշտ փակվեց։

Պահպանողական ու կրոնարարոյախոսական բնույթ ուներ Հ. Զամուռճյանի «Զոհալ» («Երևակ», 1855—1856, Կ. Պոլիս) ամսագիրը։ 1865 թ. Զամուռճյանը այն փոխարինել է արդեն հայերեն «Երևակ» պարբերականով։ «Զոհալը» տպագրում էր հիմնականում կրոնական բնույթի նյութեր, աստվածաբանական մեկնաբանություններ և այլ հրապարակումներ՝ նկատի առնելով թուրքախոս հայ ընթերցողին։ Դրան հակառակ՝ ժողովրդավարական բովանդակություն ուներ Կ. Փանոսյանի «Մյունատիի էրճիաս» («Արգեոսի մունետիկ», Կ. Պոլիս, 1859—1862) թերթը։ Փանոսյանը մամուլի ազատության համոզված պաշտպան էր և այս տեսակետից սուր քննադատության է ենթարկել ապատ խոսքի ու կարծիքի դեմ ուղղված բռնությունները։ 1862 թ. Զեյթունի ինքնապաշտպանության օրերին «Մյունատիի էրճիասը» հանդես եկավ իրենց իրավունքը զենքով պաշտպանող լեռնցիների օգտին, որի պատճառով Կ. Փանոսյանը բանտարկվեց, իսկ «Մյունատին» ընդմիշտ դադարեց։ Տարիներ անց այս հրապարակախոսը հիմնեց «Մանզումեի էֆքյար» թերթը («Կարծիքների շարք», Կ. Պոլիս, 1866—1896, 1901—1917)։ Այն պարունակում էր ազգային, հասարակական ու մշակութային հարուստ լրատվություն, և իր խմբագրի առաջավոր հայացքների համեմատ՝ զգալի ներդրում ունեցավ արևմտահայ հրապարակախոսության զարգացման ասպարեզում։

Ժողովրդավարական հրատարակություններից էր Մ. Այվազյանի «Արարատ» թերթը։ Այն սուր հարձակումներ է գործել մասնավորապես հայ էֆենդիական դասի դեմ, ծանակել նրա ազգային դիմազրկությունը և այն, որ այդ խավը արևմտահայության մեջ իրականացնում էր Բ. Դռան քաղաքականությունը։ «Արարատը» բայահայտել է գավառներում թուրքական պաշտոնեության չարաշահումները, հայ ազգաբնակչության նկատմամբ վայրագություններ հրահրելը։ Այդ ոգով գրված մի թղթակցության պատճառով Մ. Այվազյանը դանակոծության է ենթարկվել մեծ վեզիրի ընդունարանում և շատ չանցած՝ վախճանվել ստացած վնասվածքներից[7]։

Նշված տասնամյակին լայն տարածում ունեին նաև հայատառ թուրքերեն այլ պարբերականներ, որոնց մեջ ճանաչված հեղինակություն էր «Թերճեմանը էֆքյար» («Մտքերի թարգմանիչ») թերթը (Կ. Պոլիս, 1877—1884)։ Թերթը անդրադարձել է Արևմտյան Հայաստանի և Կ. Պոլսի հայության կյանքին, պաշտպանել հարստահարվող ժողովրդին ու բարենորոգումների գաղափարը։ Կանգնած էր անկախ դավանանքից ազգային կապերն ամրացնելու դիրքերի վրա և քարոզում էր ազգային միաբանություն։ Այդ թերթից հետո Կ. Պոլսում առաջին հայատառ թուրքերեն հրատարակության պատիվն անցավ «Ռևրիտեի շարքիյե» («Արեբելյան հանդես») թերթին (Կ. Պոլիս, 1885—1921)։ Այս թերթը ևս հմտալի հոդվածներ է տպագրել Կ. Պոլսի հայության, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, նրա ազգային ու մշակութային առօրյայի մասին։ Հայատառ թուրքերեն առաջադիմական հրատարակությունները ուշագրավ են նաև այն տեսակետից, որ արժեքավոր նյութեր են պարունակում հասունյան-հակահասունյան պայքարի, ազգային միաբանության հարցերում արևմտահայ կաթոլիկ համայնքի վերաբերմունքի ու տարակարծությունների վերաբերյալ։ 1850—1890-ական թթ. հայատառ թուրքերեն մամուլի ստեղծման գործում կարևոր ներդրում են ունեցել Հ. Հաճյանը, Ա. Սադայանը, Ն. Պեզիրճյանը, Տ. Ճիվելեկյանը, Մ. Գափամաճյանը, Հ. Թոլայանը և ուրիշներ, որոնք խմբագրել են նաև հայատառ թուրքերեն երգիծական պարբերականներ, որոնց մշակութային արժեքը առ այսօր տակավին քիչ է ուսումնասիրվել։

Հայատառ թուրքերեն պարբերականներ են հրատարակվել նաև Կ. Պոլսից դուրս, գավառներում՝ ընդհուպ մինչև Մեծ Եղեռնը։ Այսուհանդերձ, XIX դարի հայատառ թուրքերեն մամուլի խոշոր կենտրոնը մնում էր մայրաքա-

---

6 «Մասիս», 25 օգոստոսի, 11 սեպտեմբերի 1862։

7 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ կեսարիո. հ. 2, Կահիրե, 1937, էջ 2039։

ղաքը, որտեղ հրատարակվում էին մի քանի անգամ ավելի շատ թերթեր և ամսագրեր, քան գավառներում։ Պատկերը փոխվում է XX դարի սկզբից մինչև 1915 թ., երբ այստեղ կտրուկ նվազում է հայատառ թուրքերեն թերթերի քանակը՝ գավառների նույնանման հրատարակությունների համեմատ։ Պետք է եզրակացնել, որ հայ թուրքախոս հատվածները ազգային մշակույթի խառնարանում՝ Կ. Պոլսում, աստիճանաբար հեռանում էին պարտագրված թուրքերենից և ավելի մեծ չափերով ընդգրկվում մայրենի լեզվի և դրա միջոցով՝ արևմտահայ մշակույթի և հանրային կյանքի ոլորտներ։ Արևմտահայ մամուլի պատմության հաջորդ շրջանը ընդգրկում է 1880—1908 թթ.՝ համիդյան բռնապետության ծավալումից մինչև երիտթուրքական հեղաշրջումը։

1880-ական թթ. սկզբին արևմտահայության դեմ ուղղված քաղաքական բռնությունների պայմաններում հայ մամուլից դուրս են մղվում ազգային ինքնորոշման տրամադրությունները։ Հրապարակախոսության մեջ առաջատար են դառնում տնտեսական ու մտավոր կյանքին վերաբերող թեմաները։ Գավառը մամուլում դառնում է վերլուծությունների միջոցով ճանաչողության անմիջական առարկա։ Հրապարակվում են տեղագրական, պատմական, ազգագրական բնույթի հոդվածներ, երկրագործության, արհեստների ու առևտրի վերաբերյալ բազմաթիվ նյութեր։ Կապված Արևմտյան Հայաստանի իրական կացության բացահայտման հետ՝ առաջ է քաշվում իրապաշտական գեղարվեստական գրականության, ինչպես և գեղագիտության հիմնավորման խնդիրը։ Ուշագրավ է, որ ռեալիզմի հիմնավորման համար իբրև տեսական հիմք է ընդունվում պոզիտիվիզմի փիլիսոփայությունը, որ 1880-ական թթ. միաժամանակ իրականացվեց Կ. Պոլսում («Արևելք», «Գիտական և իմաստասիրական շարժում») և Զմյուռնիայում («Մետեորա»)։

1880-ական թթ. մամուլում առավել խորանում են հայ երկու խոշոր հատվածների հոգևոր ու մշակութային կապերը։ Թատրոնի, գրականության և հասարակական գործունեության ասպարեզներում հաստատվում են գործնական կապեր։ Հայտնի են Գր. Արծրունու, Ա. Արփիարյանի, Մ. Սանասարյանի և այլոց ջանքերը՝ միասնական ուժերով Արևմտյան Հայաստանում լուսավորական ու կրթական գործը զարգացնելու ուղղությամբ։ Արդյունավետ գործունեություն է ծավալում «Միացյալ ընկերություն հայոցը», հրապարակ է դալիս «Արևելք» թերթը (1884), որի առաջատար գործիչները՝ Ա. Արփիարյանը, Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Լ. Բաշալյանը և ուրիշներ արևմտահայ հրապարակախոսությանը տալիս են ռեալիստական ուղղություն՝ ժողովրդի կացության ըստ հնարավորին բացահայտումը և դրա նկատմամբ իրական պատկերացում և որոշակի հասարակական կարծիքի ստեղծումը համարելով լրագրության կարևորագույն պարտականություն։ «Արևելքը» արևմտահայ մամուլի պատմության մեջ առաջինն է, որ առանձին անհատի (տնօրենի) սեփականությունը չէր, այլ հանդես էր դալիս որպես յուրահատուկ բաժնետիրական ընկերության սեփականություն։ Թերթի նյութականը ապահովում էր հարուստ ազգայիններից կազմված նրա վարչությունը, որի հայացքները միայն մասամբ էին արտահայտվում «Արևելքի» էջերում։ Վարչությունից անկախ և տարբեր դիրքավորում ուներ նրա խմբագրական կազմը[8], որն էլ փաստորեն որոշում էր թերթի ուղղությունը։ Համիդյան բռնապետության պայմաններում մամուլի դերը առանձնապես բարձրացավ նաև նրա տպագրած գեղարվեստական երկերի շնորհիվ։ Թերթերում և հանգեսներում տպագրված դրական երկերի հանդեպ մամուլի գրաքննությունը պակաս ավերիչ էր, քան գրքերի գրաքննությունը, որով և պայմանավորված էր մամուլի այս առանձնահատկությունը։

1890-ական թթ. կոտորածների ժամանակաշրջանում ծանր հարված հասավ նաև հայ մամուլի զարգացմանը։ Համիդը մտահոգված էր կոտորածները առավելագույն գաղտնիության պայմաններում իրագործելու խնդրով։ Նրա

8 «Նոր կյանք», Լոնդոն, 1899, № 19, էջ 298։

հրահանգներով դրաքննությունն իրականացրեց լրատվության իսկական շրջափակում՝ մեկուսացնելով Արևմտյան Հայաստանն արտաքին աշխարհից։ 1894 թ. գարնանը նույնիսկ Կ. Պոլսում շատերը չգիտեին, որ Արևմտյան Հայաստանի մի քանի շրջաններում սով է տարածվել։ Խափանվեց «Ավետարերը» հանդեսը՝ դրա մասին որոշ տեղեկություններ տալու պատճառով[10]։ «Թրքաց կառավարությունը,—գրում էր պոլսեցի լավատեղյակ թղթակիցը,—վարագույրը բաշած է և ծածկեր է Հայաստանի մեջ բոլոր անցած-դարձածները և այնքան Կ. Պոլսո մեջ մարդ չգիտեր, թե սով կտիրե ներսերը (իմա Արևմտյան Հայաստանում—Ա. Խ.) և եթե գիտնա ալ չէ կարող և չի էլ համարձակիր ոտքի կանգնելու և դրամ հավաքելու, վասնզի կառավարությունը չներեր»[11]։ Հանգանակություններ բացահայտելու դեպքում թուրքական իշխանավորները բռնագրավում էին հավաքած գումարը։ Անգլիական «Ստանդարտ» թերթը գրում էր, որ Մալաթիայի սովյալների համար հանգանակված 3500 լիրան գործածվել է այդ գավառում մզկիթ կառուցելու վրա[12]։

Հայ մամուլին խստագույնս արգելված էր լրատվություն տալ Սասունի կոտորածների մասին։ Մինչդեռ, ընդհակառակն, թուրքական հրատարակությունները ոգի ի բուն ճգնում էին հերքել եվրոպական թերթերի էջերը թափանցած կոկտուր տեղեկությունները իրական դրության վերաբերյալ։ Շատ գավառներում կոտորածները սկսվում և ընթանում էին նախապես մտածված և կշռադատված պլանով։ 1894—1896 թթ. կոտորածներին ակտիվորեն մասնակցում էին թուրքական կանոնավոր զորքերը։ Ի դեպ, երիտթուրքերը հետագայում, 1915—1916 թթ. յուրացնելու էին Աբդուլ Համիդի քաղաքականությունը գավառներում. այն թուրքական պաշտոնյաները, որոնք խղճահարություն կամ ներողամտություն էին ցուցաբերում դատապարտված ժողովրդի հանդեպ, հեռացվում էին, իսկ ջանասերները պարգևատրվում էին շքանշաններով[13]։

1894—1896 թթ. արևմտահայ մամուլը ենթարկվեց չտեսնված խստագույն դրաքննության և ոստիկանական հսկողության՝ ամեն կերպ թաքցնելու համար գավառի արյունալի իրադարձությունները։ «Ազգային գործերի վրա կտրող են դրել պարզապես անմեղ լուրեր հաղորդելով կամ պատրիարքարանի ժողովների որոշումները հրատարակելով... Քաղաքական լուրերը և երբեմն-երբեմն այս առթիվ խմբագրականները նույնպես անկախորեն չեն շարադրվում, հայ լրագիրները պարզապես քաղվածքներ են անում «Լեվանդ հերալդից», թուրք լրագիրների առաջնորդողներից և շատ քիչ անգամ էլ բուն եվրոպական լրագիրներից»,—գրում էր «Մշակը»[14]։ Թուրքիայում հրատարակվող մամուլին պարտադրվեց տալ միայն իշխանությունների պատրաստած լրատվությունը արևմտահայերի վիճակի մասին։ Կեղծիքն ու ապատեղեկատվությունը թերթերում հասան հրեշավոր չափերի։ Այդպիսի ապատեղեկատվության ցայտուն օրինակներից է Աերաստիայի կոտորածներից հասարակության ուշադրությունը շեղելու հետևյալ միջադեպը. Կ. Պոլսի թուրքական թերթերից մեկը տպագրեց Աերաստիայի իր թղթակցի մի հրապարակումը՝ «Մի գիժ կով» վերնագրով, որտեղ տեղի ազգաբնակչության հուզված վիճակը պատճառաբանում էր այն բանով, որ քաղաքում «մի գժված կով» իրարանցում է առաջացրել[15]։

Մամուլին ակնդետ հետևող սուլթանը երկրի ներքին իրավիճակին վերաբերող տեղեկատվությունը ամբողջովին հանձնեց տպագրական տեսչությանը

9 «Մշակ», 12 ապրիլի, 3 մայիսի 1894։
10 Նույն տեղում, 11 հունիսի 1894։
11 Նույն տեղում, 3 մայիսի։
12 Նույն տեղում, 11 հունիսի։
13 «Արձագանք», 8 մայիսի 1896։
14 «Մշակ», 25 փետրվարի 1895։
15 «Մուրճ», 1905, № 11—12, էջ 70։

և ոստիկանությանը[16]։ Գավառների մասին պաշտոնական լուրերը կազմվում էին ոստիկանությունում, որի ներկայացուցիչներն այնուհետև վերահսկում էին տպագրության գործընթացը։ Ըստ այդ «պաշտոնական զեկույցների», կյանքը գավառներում պատկերվում էր խաղաղ ու սովորական առօրյայով, բնակչությունը, իբր, ապրում էր անվրդով ու երջանիկ կյանքով՝ «սուլթանի անսահման ողորմածության և իմաստության շնորհիվ»։ Ջրավարարվելով այս շարունակական կեղծիքով, թուրքական իշխանությունները 1895 թ. սկզբներին տեղական, այդ թվում և հայկական մամուլին սկսեցին պարտադրել մի նոր «լրագրական ժանր»՝ բնակչության շնորհակալագրերն ու գոհունակության ուղերձները սուլթանին։

Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներում թուրքական ջարդարարներին հայերը, այսուհանդերձ, ցույց տվեցին հերոսական դիմադրություն, որի արձագանքները լսելի դարձան ռուսական ու եվրոպական մամուլում։ Նախապես թուրքական իշխանություններն ընկան դժվար վիճակի մեջ, որովհետև նման լուրերը հերքում էին Արևմտյան Հայաստանի բնակչության երջանիկ կյանքի մասին պալատական հեքիաթները։ Սակայն կեղծիքը անհրաժեշտորեն պետք էր հիմնավորել կեղծիքով, ուստի և կոտորածների ամբողջ մեղքը թուրքական քարոզչությունը սկսեց վերագրել «խռովարար և չարագործ» հայ խմբերին։ 1895 թ. այս մեղադրանքը մի բուռ «խռովարարներից» տարածվեց արդեն գավառական ամբողջ հայ բնակչության վրա, մինչև որ վերաճեց «դավաճան և քայքայիչ» հայ տարրին առհասարակ խարանող պետական քարոզչության։ Սադրանքն առավել համոզիչ դարձնելու նպատակով թուրքական պաշտոնեությունը տպագրել էր տալիս իբր գավառներից ստացված հանրագրեր՝ խոստովանություններով ու զղջման զգացումներով լեցուն։ Թուրքական «Սաբահ» թերթը 1895 թ. խաղում էր կեղծ լայնախոհություն՝ «խռովարար ու ապստամբ հայերից» տարբերելով ու նրանց հակադրելով իրենց «խաղաղասեր ու բարեհպատակ» հայրենակիցներին։ 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում հայերի զանգվածային կոտորածներից հետո ջարդերը առավել անզուսպ դարձան գավառներում։ Դրանից հետո իշխանությունները հայ մամուլի դեմ անցան ոչնչով չսահմանափակված բռնությունների։ Հայ խմբագիրներին («Արևելք», «Հայրենիք», «Ճերիտեի շարքիյե» և այլն) ոստիկանությունը ստիպում էր տպագրել հակահայկական հոդվածներ՝ վերը նշված մեղադրանքների ոգով։ Կաշառքին ու սպառնալիքներին տեղի տվեցին նաև Կ. Պոլսի ֆրանսերեն ու անգլերեն պարբերականները, որոնք տպագրեցին այդ բնույթի խմբագրականներ։ Ոստիկանությանը հուսահատ դիմադրություն ցույց տվեցին «Արևելքը», «Ճերիտեի շարքիյեն» և մանավանդ «Հայրենիքը», որոնք զանազան պատրվակներով խուսափեցին պարտադրված խմբագրականները տպագրելուց։ Ի տարբերություն վերոհիշյալ թերթերի, ոստիկանության հրահանգներին անմոռուն ենթարկվեցին «Փունջը», «Լույսը» և ազգային շարժման հանդեպ իր երբեմնի առաջադիմական դիրքը կտրուկ փոխած «Մանզումեի էֆքյարը», որոնք դատապարտում էին գավառների և Կ. Պոլսի հայերին «մոլորեցնող» անհեռատեսներին։ Հակառակ մտայնությունն արտահայտող «Հայրենիքը» 1896 թ. հուլիսին խափանվեց և վերահրատարակվեց 1909 թ.՝ համիդյան միապետության վախճանից հետո[17]։

Կոտորածներից հետո և միջազգային հասարակայնության ուշադրության պայմաններում սուլթանն անցավ կատարվածը չնչին չափերի հասցնելու միջոցով հետքերը քողարկելու քաղաքականությանը՝ փոքր-ինչ թուլացնելով հսկողությունը հայ մամուլի հանդեպ։ Սրանով պետք է բացատրել, թե ինչու Բ. Քեչյանին 1896 թ. արտոնվեց «Բյուզանդիոնի» հրատարակությունը։

1890-ական թթ. կեսից մինչև համիդյան բռնակալության ավարտը արևմտահայ մամուլն ու հրապարակախոսությունը խիստ ճնշումների ներքո

16 «Արձագանք», 20 հունվարի 1895։

17 «Հայրենիք», 19 հուլիսի 1909։

դրկվեցին աղդային ու հասարակական սրությունից։ Հրապարակախոսությունից չքացավ քննադատական լիցքը, քաղաքական հարցեր շոշափելու հնարավորությունը, ազգային կարևոր հիմնահարցերի վերլուծությունը, որ հասարակական հնչեղություն էր ստացել 1880—1890-ական թթ. «Արևելքում», «Մասիսում» և «Հայրենիքում»։ 1896—1908 թթ. «Արևելքում», «Մանզումեի Լֆքյարում», «Մասիսում» և «Բյուզանդիոնում» վերակենդանացավ բարոյախոսական հրապարակախոսության ժանրը, որ հաղթահարվել էր դեռևս 1850—1860-ական թթ. մամուլում։ Փոխարենը, նկատելի զարգացում ապրեցին դավառին նվիրված հրապարակումները, որոնք վերաբերում էին ժողովրդի կենցաղին, սովորույթներին, տնտեսական ու կրթական իրողություններին։ Տարածված թեմաներից մեկը դարձավ հոգևորականության գործունեությունը, մանավանդ՝ եկեղեցու առաքինությունից շեղվող հոգևորականության քննադատությունը։ Նշված հրևույթները հնարավորություն են տալիս ասելու, որ այս ժամանակահատվածում արևմտահայ մամուլը որքան էլ տարուբերվեր վերացականի և որոշակիի սահմաններում, զգալիորեն մոտենում էր գավառական իրականությանն ու ժողովրդի կյանքին, ընդառաջում մտավոր նոր պահանջներին։ Այս տեսակետից մամուլի և հրապարակախոսության մեջ կարևոր ներդրում արեցին այնպիսի գործիչներ, ինչպես Հ. Գազանճյանը, Ա. Անտոնյանը, Հ. Մամուրյանը, Մ. Գոչունյանը, Օ. Ջիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը, Ռ. Զարդարյանը, Ա. Հարությունյանը, Բ. Քեչյանը Մ. Շամտանճյանը և ուրիշներ։

Արևմտահայ մամուլի նախընթաց և մյուս փուլերի բնութագրական մի կողմն են ներկայացնում նաև կրոնական պարբերաթերթերը։ Կրոնական հրատարակություններ են ունեցել, ժամանակագրական կարգով, նախ ամերիկյան բողոքական միսիոներները («Շտեմարան պիտանի գիտելյաց», Զմյուռնիա, 1839—1854, «Ավետաբեր», Կ. Պոլիս, 1855—1915), այնուհետև Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պաշտոնական դավանանքը պաշտպանող հրատարակությունները («Լույս», Արմաշ, 1864—1878, «Սիոն», Երուսաղեմ, 1866—1877) և ապա հայ կաթոլիկները («Պատկեր», Կ. Պոլիս, 1890—1901, «Կաթուղիկե արձագանք», Կ. Պոլիս, 1911—1915)։ Հայ եկեղեցու քարոզչությունն են իրականացրել նաև «Լույս» (Կ. Պոլիս, 1874—1885, 1905—1907), «Բուրաստան մանկանց» (Կ. Պոլիս, 1882—1890), «Եկեղեցի Հայաստանյայց» (Կ. Պոլիս, 1887—1889), «Խոսնակ Հայաստանյայց եկեղեցվո» (Կ. Պոլիս, 1888) և այլ պարբերականներ։

Արևմտահայ մամուլի գոյության հաջորդ փուլը ընդգրկում է համիդյան ռեժիմի տապալումից մինչև ցեղասպանության իրականացման ժամանակաշրջանը (1909—1914)։ Այս փուլի կարևոր նորույթն էր այն, որ Կ. Պոլսում և գավառներում հայտնվեցին հայ ազգային կուսակցությունների հրատարակությունները, որպիսիք մինչ այդ բացառապես լույս էին տեսնում արտասահմանում։ 1909—1914 թթ. ընթացքում Կ. Պոլսում լույս են տեսել «Ազատամարտը», «Առաջամարտը», «Բյութանիան», «Բագինը» (Հայ Հեղափոխական Դաշնակցություն), «Ապագան», «Կայծը» (Ս.-Դ. Հնչակյան կուսակցություն), «Դաշինքը», «Վերածնունդը», «Ռամկավարը» (Սահմանադրական Ռամկավար կուսակցություն), «Կոհակը», «Դայլայլիկը» (սոցիալ-դեմոկրատական ուղղության) և այլ պարբերականներ։

1908—1914 թթ. մամուլի մյուս կարևոր նորույթը, թերևս, պետք է դիտել բուն Արևմտյան Հայաստանում (գավառներում) զգալի քանակով թերթերի հայտնությունը։ Այս հանդամանքը կապվում էր գավառներում ազգային ինքնագիտակցության վերելքի և վերը նշված՝ ազգային կուսակցությունների գործունեության աշխուժացման հետ։ Թերթեր են տպագրվում Վանում, Մարզվանում, Եվդոկիայում, Մուշում, Բրուսայում և այլուր։ Հատկանշական է, որ այս պարբերականների մեծ մասը արդեն դադարել էր 1912 թ., որը եղեռնին նախորդող շրջանում հայերի հանդեպ երիտթուրքերի թշնամական քաղաքականության հետևանքն էր։ Երիտթուրքերը ձգտում էին աստիճանա-

բար վերացնել կամ խիստ սահմանափակ դարձնել հայերեն թերթերի հրատարակության հնարավորությունները մասնավորապես գավառներում։ 1914 թ. ամբողջ Արևմտյան Հայաստանում տպագրվում էր շուրջ մեկ և կես տասնյակի չափ հայերեն պարբերական (գլխավորապես թերթեր), որոնք բոլորն էլ դադարեցին 1915 թ.։ Եվ ընդհանրապես, 1915—1917 թթ. ամբողջ արևմտահայ մամուլը գրեթե դադարել էր գոյություն ունենալուց՝ երիտթուրքերի ձեռնարկած ցեղասպանության հետևանքով։

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПРЕССЫ (1832—1914 гг.)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

1830—1850-ые годы — начальный период развития западноармянской прессы, когда в условиях национального пробуждения развиваются информационная система печати, журналистика и публицистика. Следующий этап связывается с формированием общественных течений (1860—1870-е гг.). В эти годы в прессе обсуждались вопросы улучшения условий жизни западных армян, упорядочения административной системы, развития культуры и просвещения. В частности, в демократических изданиях были отражены идеи национально-освободительной борьбы армянского народа против турецкого гнета. Следует выделить 1880—1890 годы, период гамидовской реакции в Османской Турции. Отдельным этапом истории западноармянской прессы можно считать 1908—1914 гг., предшествовавшие геноциду армян.

FROM THE HISTORY OF FORMATION AND DEVELOPMENT OF THE WEST ARMENIAN PRESS (1832—1914)

Dr. of the Hist. Sc. A. A. KHARATIAN

Summary

The 1830s to the 1850s were the initial period of the development of the West Armenian Press, when at the time of national awakening information system of press and journalism were evolving. The next stage is connected with the formation of social tides (1860—1870). During this period, the problems of bettering the life conditions of the West Armenians, the question of the regulations of the administrative system and the development of culture and education were discussed. Particularly, the ideas of national liberation struggle of the Armenians against the Turkish yoke were rejected in democratic publications. 1880—1890 are to be noted as a period of hamidian reaction of Ottoman Turkey. 1908—1914, years preceeding the Genocide of the Armenians, may be regarded as a distinct period in the history of the West Armenian press.